

# Խանջյան համայնքի ղեկավարի հաշվետվությունը 2018 թվականի տարեկան գործունեության վերաբերյալ

«05» փետրվարի 2019թ.

Գ.Խանջյան

Չարգելի Խանջյան համայնքի բնակիչներ և ավագանու անդամներ, այսօրվա ժողովում ես ձեզ կներկայացնեմ 2018 թվականի տարեկան հաշվետվությունը կատարված աշխատանքների, բյուջեի կատարողականի, և առկա հիմնախնդիրների մասին:

Կարծում եմ կծավալվեն ակտիվ քնարկումներ, մտքերի փոխանակումներ հարց ու պատասխաններ, առաջարկություններ:

Մենք աշխատել ենք ապահովել 2018 թվականի բյուջեյով նախատեսված սեփական եկամուտների հավաքագրում:

Խանջյան համայնքի 2018 թվականի գյուղապետարանի բյուջեն մուտքային և ծախսային մասով կազմում է 43479,7 հազար դրամ:

Ճիշտ է առաջին կիսամյակում մեր եկամուտների հավաքագրման տոկոսը ցածր էր, բայց աշխատեցինք երկրորդ կիսամյակում կատարել բյուջեյով նախատեսված հարկային պարտավորությունները, որով աշխատեցինք լուծել Խանջյան համայնքում ծառացած որոշակի խնդիրներ:

Խանջյանի գյուղապետարանի բյուջեն մուտքային և ծախսային մասով ունի հետևյալ տեսքը`

մուտքային մաս	նախատեսված	կատարված	տոկոս
1. հողի հարկ	9050.500 հ.դ.	6229,4 հ.դ.	68,8%
2. գույքահարկ	4670,400 հ.դ.	3499,2 հ.դ.	74,9%
3. տեղական տուրքեր	200.000 հ.դ.	63,7 հ.դ.	31,8%
4. ոչ հարկային եկամուտներ	455,9 հ.դ.	76,39 հ. դ.	16,76
ա) հողի վարձավճար	600.000 հ.դ.	385,0	64,17
5. դոտացիա	27.781.900 հ.դ.	27,781,900 հ.դ.	100%
6. գույքահարկ համ. ծարչ. կար. գտն.	720,000 հ.դ.	720,300 հ.դ.	100%

Բյուջեի եկամուտների հավաքագրման տոկոսը բարձրացավ դեղձի, սալորի և խաղողի բերքահավաքի աշխատանքների ավարտից հետո

2018 թվականի նախատեսված բյուջեի ծախսային մասի տարեկան հաշվետվությունը ունի հետևյալ տեսքը՝

ծախսային մաս	վարչական
1.տեղական ինքնակառավարում	26888,8հ.դ.
2.գրադարան	919.4 հ.դ.
3.կուլտուրայի տուն	1696,8 հ.դ.
4.կրթություն	900,1 հ.դ.
5.մշակութային միջոցառ.	1400,0հ.դ.
6.աղբահանություն	1500.000 հ.դ.
7.սոցիալական պաշտպանություն	1050.000 հ.դ.
8.Փողոցների լուսավորում	1754,2 հ. դ.
9.ճանապարհների վերանորոգում	989,0 հ.դ.
10.Ընդհանուր բնույթի այլ ծառայություն	
11.Սպորտային միջոցառումներ	200,000 հ.դ.
12.Տնտես. հարաբերություններ	667,700 հ.դ.

***Խանջյան համայնքում 2018 թվականին կազմակերպվել են մի շարք միջոցառումներ՝***

- 1.Կատարվել է փողոցների և գերեզմանատան միջավայրի սան մաքրում:
- 2.Կատարվել է անկախության տոնակատարությունների և ամանորյա միջոցառումներ :
- 3.Խանջյան համայնքի սոցալապես անապահով ընտանիքներին տրվել է սոց. օգնություն:
- 4.Կատարվել են դաշտամիջյան ճանապարհների հարթեցում,փոսալցման աշխատանքներ
- 5.Բնակավայրի ներսում կատարվել են փոսալցման ,խճապատման աշխատանքներ:
- 6.Կատարվել է երեք փողոցների գիշերային լուսավորության անցկացում:

***Ռազմավարական կտրվածքով Խանջյան համայնքի սոցիալ տնտեսական վիճակը բարելավելու համար ընտրվել է հետևյալ ուղվածությունները՝***

***կատարված՝***

- 1.Գատարվել է գյուղամիջյան ճանապարհների վերանորոգում,լուսավորության անցկացում:
  - 2. Կատարվել է փողոցների լուսավորում:
- Նախատեսված՝***
- 2.Բուժ կետի շենքային պայմանների բարելավում:
  - 3.Մանկապարտեզի շենքի վերանորոգում:
  - 4.Սնացած փողոցների լուսավորության անցկացում:

**Խանջյան համայնքի ղեկավար՝**

**Ա.Արոյան**

